ՏԱԹԵՎԻԿ ՌՈՍՏՈՄՅԱՆ
Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, բակալավրիատ, 3-րդ կուրս

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2005-2017 ԹԹ.

Հիմնաբառեր. *ճյուղային կառուցվածք, տնտեսության ճյուղեր, շինարարություն, որակյալ տնտեսական աճ, հիմնական ճյուղեր, ճյուղային ձևախեղումներ*

Հոդվածում ներկայացված են ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և տնտեսական աճն ապահովող հիմնական ճյուղերի շարժընթացը 2005-2017 թթ.: Բացահայտվել է, որ 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքը բազմազանեցված չի եղել, ուստի ճգնաժամի հետևանքները խորն են դրսևորվել: Շինարարության ոլորտը, ունենալով ՀՆԱ-ում ամենամեծ մասնաբաժինը, այժմ իր տեղը զիջում է ծառայություններին և արդյունաբերությանը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց ՀՀ տնտեսության խոցելի կողմերը արտաքին ազդակներից և դրանց դիմակայման անկարողությունը:

Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամին անմիջապես նախորդող տարիներին ՀՀ-ում ձևավորված տնտեսական աճի մոդելը հիմնված էր արտաքին ֆինանսավորման՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների, տարեցտարի աճող պաշտոնական և մասնավոր տրանսֆերտների հոսքերի վրա: 2005-2008 թթ. իրական ՀՆԱ հավելաճի միջին տարեկան տեմպը կազմել է 11.9%, որին առավելապես նպաստել են շինարարությունն ու ծառայությունների ոլորտը (միջին նպաստումն աճին՝ համապատասխանաբար 4.7%-ային կետ և 3.8%-ային կետ): 2009 թ. անկումը հիմնականում պայմանավորված է եղել շինարարության ոլորտի 10.5% անկմամբ: Մշակող արդյունաբերության անկումը կազմել է 8.8%, էներգետիկայինը՝ 13.3%: 2009 թ. 14.1% տնտեսական անկումից հետո ՀՀ տնտեսությունն աստիճանաբար սկսում է վերականգնվել (տե՛ս գծապատկեր 1):

2005-2017 թթ. ՀՀ տնտեսական աճի միջին տարեկան տեմպը կազմել է 11,9%: Ընդ որում, այն իր առավելագույն մակարդակին հասել է 2005 թ.՝ կազմելով 13.9%, որին առավելապես նպաստել են ծառայությունների ոլորտը՝ 4.8 տոկոսային կետով և շինարարության ոլորտը՝ 4.3 տոկոսային կետով: Հետճգնաժամային 2010-2017 թթ. տնտեսական աճը միջինում կազմել է 3.9%, որին առավելապես նպաստել են ծառայությունների ոլորտն ու արդյունաբերությունը (միջին նպաստումն աճին՝ համապատասխանաբար 2.2%-ային կետ և 1.1%-ային կետ):



Գծապատկեր 1. ***ՀՀ տնտեսական աճը (տոկոս) ու հիմնական ճյուղերի նպաստումները աճին (տոկոսային կետ)*** *2005-2017* ***թթ.***[1]

2005-2017 թթ. բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն աճի միտում է ունեցել (տե՛ս գծապատկեր 2): Այն իր առավելագույն մակարդակին հասել է 2014 թ.՝ կազմելով 3852 դոլար (1602.1 հազար դրամ): 2017 թ. ՀՆԱ-ն, մեր երկրի բնակչության մեկ շնչի հաշվով, կազմել է 3871 դոլար (1868.8 հազար դրամ), որը շուրջ երկու անգամ գերազանցում է 2005 թ. ցուցանիշը (1557 դոլար կամ 712,8 հազար դրամ), (տե՛ս հավելված 4):

Նախաճգնաժամային ժամանակահատվածում հանրապետությունում տնտեսական աճը ապահովվել է տնտեսության բոլոր 5 բազային ճյուղերի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր) արտադրանքի և ծառայությունների ծավալների ավելացման հաշվին: Սակայն արդյունաբերության մրցունակության մակարդակի աստիճանական նվազման և արտահանման հարաբերական անկման պայմաններում երկրի տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժը շինարարությունը և ծառայությունների ոլորտներն էին:

Վերլուծենք ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները:



Գծապատկեր 2. ***ՀՆԱ ճյուղային կառուցվածքը***[2]

[1] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a :

[2] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a:

Դիտարկվող ժամանակահատվածում, միջինում ՀՆԱ-ում ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել է ծառայությունների ոլորտը՝ 40,4% (տե՛ս գծապատկեր 2)։ 2005–2017 թթ. դրսևորել է աճի միտում՝ բացառությամբ 2010 և 2011 թվականների (համապատասխանաբար՝ 38,9% և 38,6%)։ Այն իր առավելագույն մակարդակին հասել է 2017 թ.՝ կազմելով 49.9%, ինչը վկայում է ճյուղի՝ տնտեսության մեջ աճող կարևորության մասին։ Ծառայությունների ոլորտի աճին հիմնականում նպաստել են ֆինանսական և ապահովագրական գործունեություն, մշակույթ, զվարճություններ և հանգիստ, տրանսպորտ ենթաճյուղերի, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպում ենթաճյուղի աճերը։

Շինարարության ոլորտը, որը մինչև 2008–2009 թթ. ճգնաժամը տնտեսական աճի ապահովման հիմնական ոլորտներից էր, կտրուկ անկում ապրեց 2009 թ.՝ կազմելով 18.6%՝ 2008 թ. 25.3%-ի համեմատ։ Վերջինիս կշիռը ՀՆԱ-ում շարունակաբար անկում էր ապրում 2008–2017 թթ. և 2017 թ. հասավ 7.6%-ի՝ 2008 թ. 25.3%-ի դիմաց։ Սակայն պետք է նշել, որ 2017 թ. վերջում ոլորտում արձանագրվեց աճ, ինչը վկայում է, որ առաջիկայում ոլորտի տեսակարար կշիռը կարող է ավելանալ։ 2017 թ. ՀՀ-ում միջազգային վարկային միջոցներով իրականացվել է շուրջ 74 մլրդ ՀՀ դրամի շինարարություն։ 2016 թ. համեմատ ցուցանիշն աճել է 20%-ով։

Շինարարության ճյուղի նվազման տեմպերը, նախորդ երեք տարիների նկատմամբ, արագացել են, որը հիմնականում պայմանավորված է եղել բնակչության և պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության նվազմամբ, տրանսպորտ, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում, ինչպես նաև մշակող արդյունաբերություն ենթաճյուղերում շինարարության նվազումներով, իսկ միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարությունը հակազդել է ճյուղի նվազմանը։ Շինարարության նվազմանը հիմնականում հակազդել են նաև մշակույթ, զվարճություններ և հանգիստ ճյուղերի, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում ճյուղերի և սպասարկման այլ ծառայությունների աճերը։

Արդյունաբերության ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում միջինում կազմում է 16,3%։ Այն 2005–2017 թթ. համեմատաբար կայուն է եղել, համեմատաբար ցածր՝ 2006–2008 թթ.՝ կազմելով համապատասխանաբար 17.2%, 15%, 13,3%՝ 2005 թ. 21,8%-ի համեմատ։ Այնուհետև ոլորտի տեսակարար կշիռը մեծացել է և 2017 թ. կազմել 17,4%։ Արդյունաբերության բաժնի աճը հիմնականում ապահովել է մշակող արդյունաբերությունը։ Ծխախոտին, խմիչքներին և հիմնային մետաղներին բաժին է ընկել մշակող արդյունաբերության գրեթե կեսը։ Մնացած 50%-ն ապահովվել է մյուս ենթաճյուղերի հաշվին՝ հագուստ, դեղագործություն և այլն։

Գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում միջինում կազմում է 17.6%։ Այն դիտարկվող ժամանակահատվածում ցուցաբերել է անկման միտում։ Բաժնի կտրուկ անկում զգացվել է 2008–2009 թթ.՝ համապատասխանաբար 16,3% և 16,9% (2005-ին՝ 19,1%)։ Ոլորտի բաժինն ամենամեծն է եղել 2011 թ.՝ 20,3%, այնուհետև շարունակաբար նվազել է՝ 2017 թ. կազմելով 14,7%։ Գյուղատնտեսության նվազման միտումը, սկսված 2016 թ. սեպտեմբերից և շարունակվելով մինչև 2017 թ., պայմանավորված է եղել

բուսաբուծության նվազմամբ: Անասնաբուծության աճը փոքր-ինչ հակազդել է գյուղատնտեսության նվազմանը:



Գծապատկեր 3. ***Տնտեսության հիմնական ոլորտներում ստեղծված արդյունքի ծավալների համաթվերը** 2017 **թ. հունվար-դեկտեմբեր և** 2018 **թ. հունվար ամիսներին՝ նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ***[1]

Պետք է նշել, որ 2017 թ. բարձր տնտեսական աճը պայմանավորված է եղել ծառայությունների, շինարարության և զուտ հարկերի ոլորտներում սպասվածից ավելի բարձր զարգացումներով: 2005-2017 թթ. զուտ հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում միջինում կազմել է 10,4% (2017 թ. կազմել է 10,29%՝ 2005 թ. 8,6%-ի փոխարեն):

2018 թ. հունվարը բնորոշվում է նախորդ ամսվա նկատմամբ բոլոր ոլորտների անկմամբ, իսկ նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ՝ տնտեսության գրեթե բոլոր ոլորտների աճով: Նախորդ ամսվա նկատմամբ հաշվետու ամսին շինարարության իրական ծավալն ընկել է 89.4%-ով, գյուղատնտեսական արտադրանքի իրական ծավալը՝ 81.2%-ով, ծառայությունների իրական ծավալը՝ 21.6%-ով և արդյունաբերական արտադրանքի իրական ծավալը՝ 25%-ով (տե՛ս հավելված 10,11,12,13):

Որակյալ տնտեսական աճը ենթադրում է գիտության և տեխնոլոգիական նորարարությունների գերակշռում, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում՝ հաշվի առնելով ոչ միայն ներկա, այլև ապագա պահանջմունքները, տնտեսավարող սուբյեկտների շահերի ներդաշնակեցումը տնտեսության բոլոր մակարդակներում, սոցիալական զարգացման հնարավորությունների բազմապատկումը: Տնտեսական աճը դրական ազդեցություն ունի իրական եկամուտների ավելացման, բնակչության 1 շնչին ընկնող իրական եկամուտների ավելացման և պահանջմունքների բավարարման վրա[2]:

ՀՀ-ն, պահպանելով տեխնոլոգիական ոլորտում զարգացման մեծ ներուժը, տարածաշրջանում առաջատար դիրքեր է զբաղեցնում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը պայմանավորված է բարձր մրցակցային ներուժ ունեցող մարդկային կապիտալով: Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում այսօր իրականացվող ծրագրերը մեծապես նպաստում են տնտեսության արտադրողականության և մրցունակության

[1] Տե՛ս «Ամբերդ» հետազոտական կենտրոն, https://asue.am/am/amberd/publications /analytics:
[2] http://newinspire.ru/lektsii-po-gosregulirovaniiu-ekonomiki/effektivniy-ekonomicheskiy-rost-2262

բարձրացմանը, գիտելիքահենք տնտեսության ձևավորմանն ու զարգացմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, տեղական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների արտահանմանն ու համաշխարհային շուկայում ՀՀ-ի՝ որպես տեղեկատվական, հեռահաղորդակցության և բարձր տեխնոլոգիաների զարգացած ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացմանը[1]:

2017 թ. ՀՆԱ ծավալի մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գրեթե բոլոր ծառայությունների ծավալի աճ է գրանցվել, մասնավորապես՝ տեղեկատվական և կապի ծառայությունների ծավալը ՀՆԱ ծավալի մեջ աճել է 5,3%-ով (233,8 մլրդ դրամ):

Ոլորտում ներգրավված է 15.000 մասնագետ: 2017 թ. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտում ակտիվ գործունեություն է ծավալել մոտ 650 ընկերություն՝ 69%-ը տեղական: Ոլորտի շրջանառությունը 2017 թ. կազմել է 233.2 մլրդ դրամ, որից միայն ՏՏ ոլորտի աճը կազմել է 29,6%: Հայաստանի ՏՀՏ ոլորտի երկնիշ աճը պայմանավորված է բացառապես ՏՏ ոլորտով: Եվ այդ աճի արդյունքում ընդհանուր ՏՀՏ ոլորտի մեջ ՏՏ-ի տեսակարար կշիռն արդեն կազմում է 47.4%: Ստեղծվել է 570 ընկերություն, որից 281-ին տրամադրվել է հարկային արտոնությունների հավաստագիր[2]:

ՀՀ հեռահաղորդակցության և տեղ*եկատվական ոլորտի հասույթը 2017 թ. առաջին եռամսյակում կազմել է 60*.6 մլրդ դրամ՝ 2016 թ. 53 մլրդ դրամի դիմաց: ՏՀՏ ոլորտը, այսպիսով, եռամսյակային կտրվածքով աճել է 15.5%-ով: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը 2017 թ. աննախադեպ աճ է գրանցել՝ 38.2%: Սա ամենաբարձր ցուցանիշն է 2008 թվականից ի վեր: 2009-2017 թթ. ողջ տնտեսության միջին տարեկան աճը կազմել է 1.9%, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաներինը՝ 12.7%:

«Ծրագրային ապահովում և ծառայություններ» և «Ինտերնետ ծառայությունների պրովայդեր» սեգմենտներն ընդգրկող ոլորտի ընդհանուր եկամուտը հասել է 765,1 մլն դոլարի, ինչը, 2015 թ. համեմատությամբ, ավելացել է 37%-ով:

ՀՀ-ում մրցակցային բարձր առավելություններ ունեցող տեխնիկական աշխատուժի շնորհիվ նպաստավոր ու շահավետ ներդրումային պայմաններ են ապահովվում ՏՀՏ խոշոր ընկերությունների և վերազգային կազմակերպությունների համար: Հաշվարկվել է, որ այս մրցունակ մասնագետները իրենց ընկերություններում տարեկան մինչև 49,700 դոլարի արտադրողականություն են ապահովում:

Հայաստանյան ՏՀՏ ընկերությունների հիմնական մասնագիտացումներն են ներկառուցված ծրագրային ապահովման մշակումը և կիսահաղորդիչների նախագծումը, ծրագրային ապահովման պատվերները, ֆինանսական ծրագրերի մշակումը, մուլտիմեդիային նախագծումը, վեբ–ծրագրավորումը, տեղեկատվական համակարգերը և համակարգերի ինտեգրումը[3]:

---

[1] https://ittrend.am/2017/12/30/armenian-it-2017/

[2] Տե՛ս Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, 2017 թ.:

[3] Տե՛ս Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, http://mtcit.am/main.php?lang=1&page_id=643:



Գծապատկեր 4. ***ՏՏ ոլորտի շրջանառություն***[1]

2018 թ. տեխնոլոգիական կրթության խթանմանն ուղղված միջոցառումներին, պետություն–մասնավոր համագործակցության շրջանակների ընդլայնմանը և թվայնացմանն ուղղված աշխատանքներին զուգահեռ կխթանվի նաև միջազգային պատվերների, ընկերությունների, հետազոտական լաբորատորիաների մուտքը Հայաստան: Դա կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը և գործարարության զարգացման տեսանկյունից՝ ոլորտում ցուցանիշների բարձրացմանը:

ՀՀ տնտեսությունում առկա են ՀՆԱ ճյուղային կառուցվածքի ձևախեղումներ: Դրանք ակնառու դրսևորվել են ճգնաժամի ժամանակահատվածում, որից հետո ՀՆԱ ճյուղային կառուցվածքը էական փոփոխություններ է կրել: Եթե մինչև ճգնաժամը առաջատար ճյուղերից էր շինարարությունը, ապա երկարաժամկետում այն չկարողացավ մնալ առաջատար դիրքերում, քանի որ տեղական շուկան և համապատասխանաբար պահանջարկը բավական փոքր էր, միաժամանակ ոլորտի արդյունքը արտահանելի չէր: Ճգնաժամի ազդեցությամբ շինարարության մասնաբաժինը ՀՆԱ-ում կրճատվեց, և փոխարենը տեղի ունեցավ տնտեսության բազմազանեցում. աճեցին ծառայությունների և արդյունաբերության մասնաբաժինները: 2017 թ. բարձր տնտեսական աճը պայմանավորված է եղել ծառայությունների, շինարարության և զուտ հարկերի ոլորտների զարգացումներով: Ծառայությունների ոլորտի աճն ապահովող ենթաճյուղերից ՏՏ ոլորտը արտահանման ցուցանիշով մեր տնտեսության երրորդ ոլորտն է, որի հզորացումը ՀՀ առաջնային նպատակներից է:

2017 թ. ցուցանիշները հիմք են եզրակացնելու, որ 2018 թ. կունենանք կանխատեսված տնտեսական աճը, որը կապահովվի տնտեսական ակտիվության ցուցանիշի հաշվին: Դա են փաստում 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, ԿԲ ու Ֆինանսների նախարարության կանխատեսումները:

Այսպիսով առաջարկում ենք.

[1] http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20171128_6&flag=am

1. Պետությունը պետք է մեծ ուշադրություն դարձնի կառուցվածքային քաղաքականությանը, քանի որ ՀՀ-ում, ըստ էության, ակտիվ կառուցվածքային քաղաքականություն չի իրականացվել, և այդ բացը պետք է լրացնել:
2. ՀՀ շուկան փոքր է, ուստի կարևորվում է արտահանումը: Արտահանման աշխարհագրական և ապրանքային կառուցվածքը պետք է բարելավվի՝ օգտվելով ԵԱՏՄ ընձեռած հնարավորություններից:
3. Կարևորվում է տեխնոլոգիական լուծումներով երկրի դիրքավորումը աշխարհում:

Մակրոտնտեսական կայունության ապահովման համար անհրաժեշտ է բիզնես ներդրումային միջավայրի բարելավմամբ ուղեկցվող առողջ մակրոմիջավայր:

Հավելված 1

***Հայաստան. մակրոտնտեսական ցուցանիշներ**, 2014–2017 թթ.*

	2014	2015	2016	2017
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	4829	5043	5080	5580
Անվանական ՀՆԱ (մլն դոլար)	11610	10553	10572	11560
Իրական ՀՆԱ աճ (տարեկան տոկոսային աճ)	3,6	3,2	0,2	7,5
ԱՄՆ դոլարի փոխարժեք (ժամանակաշրջանի միջին)	416	478	480	483
Գործազրկության մակարդակ (%)	17.6	18.5	18	-
Միջին ամսական անվանական աշխատավարձ (դրամ)	158580	171615	174445	-
Գնաճ (միջին տարեկան)	3	3.7	-1.4	1
Համախմբված բյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի նկատմամբ, %)	26.3	28.6	29.2	-
Համախմբված բյուջեի պակասուրդ (ՀՆԱ-ի նկատմամբ, %)	-1.9	-4.8	-5.5	-

Հավելված 2

ՀՆԱ օգտագործման կառուցվածքը (ընթացիկ գներով, մլն դրամ)

	2013	2014	2015	2016
ՀՆԱ (շուկայական գներով)	4 555 638.2	4 828 626.3	5 043 633.2	5 079 864.6
Վերջնական սպառման ծախսեր	4 514 893.0	4 714 334.6	4 599 375.6	4 613 992.3
Համախառն կուտակում	1 014 246.0	1 007 824.4	1 045 571.9	936 888.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1 291 939.2	1 379 303.8	1 499 371.1	1 679 706.7
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	2 195 684.1	2 271 701.9	2 111 530.6	2 167 275.1
Վիճակագրական շեղում	-69 755.9	-1 134.6	10 845.2	16 552.7

Հավելված 3

ՀՆԱ օգտագործման կառուցվածքը
***(ընթացիկ գներով, ընդհանուրի նկատմամբ**, %)*

	2013	2014	2015	2016
ՀՆԱ (շուկայական գներով)	100	100	100	100
Վերջնական սպառման ծախսեր	99.0	97.6	91.1	90.9
Համախառն կուտակում	22.3	20.9	20.7	18.5
Ապրանքների և ծառայությունների արտահանում	28.4	28.6	29.7	33.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	48.2	47.0	41.9	42.7
Վիճակագրական շեղում	-1.5	0.1	0.4	0.2

Հավելված 4

1 շնչի հաշվով ՀՆԱ-ն 2005–2017 թթ.[1]

Հավելված 5

ՀՆԱ կառուցվածք, արդյունաբերություն



Հավելված 6

ՀՆԱ կառուցվածք, գյուղատնտեսություն



[1] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a:

Հավելված 7

ՀՆԱ կառուցվածք, շինարարություն



Հավելված 8

ՀՆԱ կառուցվածք, ծառայություններ



Հավելված 9

ՀՆԱ կառուցվածք, զուտ հարկեր



Հավելված 10

Արդյունաբերական արտադրանքի ծավալի շարժընթացը (մլն դրամ)

Հավելված 11

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալի շարժընթացը (մլն դրամ)

Հավելված 12

Շինարարության ծավալի շարժընթացը (մլն դրամ)

Հավելված 13

Ծառայությունների ծավալի (առանց առևտրի) շարժընթացը (մլն դրամ)

Հավելված 14

ՀՆԱ, ազգային արժույթ, մլրդ

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստան	3 460,2	3 777,9	4 266,5	4 555,6	4 828,6	5 043,6	5 076,3
Ռուսաստան	49 756,7	60 282,5	68 163,9	73 133,9	79 199,7	83 232,6	86 043,6
Վրաստան	20,7	24,3	26,2	26,8	29,2	31,8	33,9
Ադրբեջան	42,5	51,2	54,0	57,7	59,0	54,4	60,0

Հավելված 15

ՀՆԱ-ն PPP-ով, մլրդ դոլար

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստան	18,9	20,2	22,0	23,1	24,4	25,5	25,8
Ռուսաստան	3 240,9	3 475,4	3 668,8	3 794,6	3 891,2	3 822,2	3 862,2
Վրաստան	25,9	28,3	30,7	32,3	34,4	35,7	37,2
Ադրբեջան	141,4	141,9	147,7	158,8	165,9	168,8	165,7

ТАТЕВИК РОСТОМЯН

ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ И ИЗМЕНЕНИЯ СТРУКТУРЫ ОТРАСЛЕВОЙ ЭКОНОМИКИ РА В 2005–2017 ГГ.

Ключевые слова: *отраслевая структура, отрасли экономики, строительство, высокий экономический рост, основные отрасли, отраслевая деформация.*

В статье представлены структурные изменения экономики РА и движение основных отраслей экономического роста в 2005–2017 годах. Выяснилось, что в 2008–2009 гг. в результате финансо-экономического кризиса структура экономики Армении не была диверсифицирована, поэтому последствия кризиса были глубоко отображены. Строительная индустрия, имеша наибольшей доли в ВВП, сейчас уступает место секторов услуг и промышленности.

TATEVIK ROSTOMYAN

ECONOMIC GROWTH AND CHANGES IN THE STRUCTURE OF THE SECTORAL ECONOMY OF ARMENIA IN 2005-2017

Key words: *branch structure, branches of economy, construction, high quality economic growth, main branches, branch deformation.*

In the article we presented the structural changes of the RA economy and the movement of the main branches of economic growth in 2005-2017. It was revealed that in 2008-2009, as a result of the financial and economic crisis, the structure of the Armenian economy has not been diversified, so the consequences of the crisis have been deeply displayed. The construction sector, with the largest share of GDP, is now yielding its place to the sectors of services and industry.

ԱՐՄԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ
Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, բակալավրիատ, 4-րդ կուրս

ԻՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔԻ ԵՎ ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՊԸ

Հիմնաբառեր. *իրական փոխարժեք, արտահանում, ներմուծում, էկոնոմետրիկ մոդել, գնահատում*

Կարևորելով իրական փոխարժեքի՝ որպես տնտեսության կարգավորման գործիքի դերը՝ հոդվածում բացահայտվել և էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ գնահատվել է իրական արդյունավետ փոխարժեքի և արտահանման ու ներմուծման կապը:

Մինչճգնաժամային շրջանում ՀՀ երկնիշ տնտեսական աճի տեմպը գերազանցապես ձևավորվել էր մի քանի ոչ արտահանելի արտադրությունների և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների աջակցության հիման վրա: Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց ՀՀ տնտեսությունում առկա «մակրոտնտեսական հիվանդությունները»: Դրանք են՝ տնտեսական աճի ոչ կայուն շարժիչ ուժերը, արտահանման սահմանափակ և հիմնականում հումքային ռեսուրսներով գերիշխող կառուցվածքը, մասնավոր տրանսֆերտներից բավականին մեծ կախվածությունը[1]: Հետևաբար, այսօր տնտեսության հիմնական խնդիրներն առնչվում են ոչ մրցունակ և ցածր արտադրողական, հաճախ իներցիոն բնույթ կրող գործունեության անկման, մրցունակ արտադրանք թողարկելու, միջազգային շուկաներ ներթափանցելու ու ձեռնարկատիրական կարողություններն ընդլայնելու դժվարությունների և արգելքների հետ:

[1] Տե՛ս Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2009, Նորարարության էկոհամակարգի սերմանումը, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2009, էջ 40: